ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Կ-060-07.07.2017,14.11.2017-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «բաժանմունքի պետերը,» բառերը, իսկ «և քննիչները» բառերից հետո լրացնել «ինչպես նաև սույն օրենքով սահմանված հիմքերով քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող ծառայողները:» բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներն են՝ կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունները, կենտրոնական մարմնի վարչությունները և կենտրոնական մարմնի բաժինները: Զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներն են՝ զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունները, կայազորային քննչական բաժինները: Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներն են՝ Երևան քաղաքի քննչական վարչության բաժինները և վարչական շրջանների քննչական բաժինները: Մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումներն են՝ մարզային քննչական վարչության տարածքային բաժինները:Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների ենթաստորաբաժանումներն են՝ գլխավոր վարչությունների վարչությունները:

3. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության և զինվորական քննչական գլխավոր վարչության պետերն ի պաշտոնե քննչական կոմիտեի նախագահի տեղակալներն են:»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հաստատում է քննչական կոմիտեի և քննչական կոմիտեի դեպարտամենտի կանոնադրությունները.

6) խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում քննչական կոմիտեի ծառայողներին, պարգևատրում է քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց.»:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում «ներքին իրավական ակտեր» բառերը փոխարինել «ներքին և անհատական իրավական ակտեր (որոշումներ, հրամաններ, հանձնարարականներ)» բառերով:

2) լրացնել 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:»:

ՀՈԴՎԱԾ 5.Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.Կարգապահական հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի կազմում ընդգրկված կոմիտեի նախագահի տեղակալը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մաս.

«4.1.Կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանում է կարգապահական հանձնաժողովը՝ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:»:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետ (բացառությամբ՝ սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետում նշված պաշտոնները), հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ:».

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.Քննչական կոմիտեում ծառայության գլխավոր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետ, Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ, մարզային քննչական վարչության պետ.

2) 2-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի պետ, մարզային քննչական վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ, մարզային քննչական վարչության քննչական բաժնի պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:».

3) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.Քննչական կոմիտեում ծառայության առաջատար պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ,Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ.

2) 2-րդ ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության բաժնի պետի տեղակալ.

3) 3-րդ ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, մարզային քննչական վարչության ավագ քննիչ:».

4) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.Քննչական կոմիտեում ծառայության կրտսեր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, մարզային քննչական վարչության քննիչ.

2) 2-րդ ենթախումբ՝ մարզային քննչական վարչության քննչական բաժնի ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ մարզային քննչական վարչության քննչական բաժնի քննիչ:»:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «Հայաստանի Հանրապետությունում բակալավրի, » բառերը փոխարինել «բակալավրի» բառով:

2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ.

«4) ընդգրկվել է քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում:»:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 9-րդ մասի երկրորդ նախադասության «Որակավորման քննություն չհանձնած» բառերը փոխարինել «Ուսումնառությունը չանցած» բառերով.

2) 10-րդ մասում՝

ա) «ուսումնառության դասընթացներից և որակավորման քննություն հանձնելուց» բառերը փոխարինել «ուսումնառությունից» բառով:

բ) 1-ին կետում «պաշտոնում» բառից առաջ լրացնել «հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «(բաժանմունքների)» բառը:

ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «ծառայողի լիազորությունների դադարումը» բառերը փոխարինել «ծառայողին պաշտոնից ազատելը» բառերով:

2) 1-ին մասի «ծառայողի լիազորությունները դադարում են՝» բառերը փոխարինել «ծառայողը պաշտոնից ազատվում է՝» բառերով:

3) 2-րդ մասում՝

ա. «ծառայողի լիազորությունները դադարեցվում են՝» բառերը փոխարինել «ծառայողին պաշտոնից ազատելը՝» բառերով.

բ. 1-ին կետում «լիազորությունների դադարեցման ձևով» բառերը փոխարինել «պաշտոնից ազատում» բառերով:

ՀՈԴՎԱԾ 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 22.1-րդ հոդվածով.

«**Հոդված 22.1. Քննչական կոմիտեի ծառայողների կադրերի ռեզերվը**

1.Քննչական կոմիտեի ծառայողները գրանցվում են կադրերի ռեզերվում հաստիքների կրճատման, քննչական կոմիտեի մարմնի կամ ստորաբաժանումների լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե քննչական կոմիտեի ծառայողին հավասարազոր պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի բարձր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց:

2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնները քննչական կոմիտեի ծառայողին առաջարկվում են ըստ հերթականության:

3.Քննչական կոմիտեի ծառայողների՝ կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը 6 ամիս է, բայց ոչ ավելի քան սույն օրենքով սահմանված քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալը, իսկ ծառայության ժամկետը սույն օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու դեպքում՝ մինչև երկարաձգված ժամկետի լրանալը:

4.Եթե քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող անձն իր դիմումի համաձայն հանվում է ռեզերվից, ապա վերջինիս ստաժը հաշվարկվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակաշրջանին համապատասխան:

5. Քննչական կոմիտեի ծառայողներին կադրերի ռեզերվում գտնվելու առաջին 2 ամիսների համար վճարվում է նրանց զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Քննչական կոմիտեի ծառայողի՝ իր դիմումի հիման վրա 2 ամիսից շուտ կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վճարումն իրականացվում է կադրերի ռեզերվում գտնվելու փաստացի ժամանակաշրջանին համապատասխան:

6.Սույն օրենքի հիման վրա քննչական կոմիտեի ծառայողներին կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատում է քննչական կոմիտեի նախագահը:»:

ՀՈԴՎԱԾ 12. Օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի «լիազորությունները դադարելու (դադարեցվելու) » բառերը փոխարինել «պաշտոնից ազատում» բառերով:

ՀՈԴՎԱԾ 13. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 24. Քննչական կոմիտեի ծառայողների պաշտոններին համապատասխանող կոչումները**

1. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-լեյտենանտի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության գեներալ-մայորի կոչումը:

2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-մայորի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության գնդապետի կոչումը:

3.Բարձրագույն պաշտոնի երրորդ ենթախմբի և գլխավոր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գնդապետի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության փոխգնդապետի կոչումը:

4.Գլխավոր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության փոխգնդապետի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության մայորի կոչումը:

5.Առաջատար պաշտոնի առաջին և երկրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության մայորի կոչումն է:

6.Առաջատար պաշտոնի երրորդ ենթախմբի և կրտսեր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության կապիտանի կոչումն է:

7.Կրտսեր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության ավագ լեյտենանտի կոչումն է:

8.Այլ մարմիններում հանրային ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող անձանց քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելիս նրանց զինվորական կամ հատուկ կոչումը (դասային աստիճանը, որակավորման դասը) համապատասխանեցվում է քննչական կոմիտեի ծառայողի կոչմանը:

9.Զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈԴՎԱԾ 14.Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) քննչական կոմիտեի նախագահի կողմից սահմանված կարգով իրականացնել հերթապահություն:»:

ՀՈԴՎԱԾ 15.Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 28.1-րդ հոդվածով.

«**Հոդված 28.1. Քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրումը**

1)Քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձինք կարող են պարգևատրվել քննչական կոմիտեի նախագահի կողմից՝ շնորհակալագրով, հուշանվերով, դրամական պարգևատրմամբ:

2)Քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:»:

ՀՈԴՎԱԾ 16. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «լիազորությունների դադարեցում» բառերը փոխարինել « պաշտոնից ազատում» բառերով:

ՀՈԴՎԱԾ 17. Օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասում «լիազորությունների դադարեցման» բառերը փոխարինել «պաշտոնից ազատելու» բառերով:

ՀՈԴՎԱԾ 18. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «լիազորությունների դադարեցման» բառերը փոխարինել «պաշտոնից ազատելու» բառերով:

ՀՈԴՎԱԾ 19.Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է հաստիքները կրճատվելիս քննչական կոմիտեի ծառայողի դիմումի հիման վրա.»:

ՀՈԴՎԱԾ 20. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 36.1-րդ հոդվածով.

«**Հոդված 36.1. Քննչական կոմիտեի ծառայողի մասնակցությունը կրթական ծրագրերին**

1.Պարտադիր վերապատրաստման ծրագրերին մասնակցելուց բացի, քննչական կոմիտեի ծառայողը համապատասխան թույլտվության առկայության դեպքում կարող է մասնակցել այլ կրթական վերապատրաստման ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների: Աշխատանքային ժամերին այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ մինչև երկու օր տևողությամբ բացակայելու թույլտվությունը տալիս է քննչական կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալը: Դրանից ավելի ժամկետով թույլտվություն տալիս է քննչական կոմիտեի նախագահը:

2.Կրթական ծրագրերին քննչական կոմիտեի ծառայողի մասնակցության կապակցությամբ քննչական կոմիտեի ծառայողի բացակայությունը համարվում է հարգելի՝ այդ ընթացքում նրա հիմնական և լրացուցիչ աշխատավարձը պահպանվում է:»:

ՀՈԴՎԱԾ 21. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում՝ «այլ վայր» բառից հետո լրացնել «ծառայության նշանակմամբ կամ» բառերը:

ՀՈԴՎԱԾ 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **Կ-060-07.07.2017,14.11.2017-ՊԻՄԻ-011/1,**
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Կ-182-13.11.2017-ՊԻՄԻ-011/1

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն_օրենքի (այսուհետ՝ Օրենք) ~~լրացնել հետևյալ բովանդակությամբ1.1-րդհոդվածով.~~

~~**«Հոդված 1.1.** Քննչական կոմիտեի մասին իրավական ակտերը~~

~~1. Քննչական կոմիտեի գործունեության և դրա կազմակերպման օրենսդրությունը բաղկացած է՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից, սույն օրենքից, այլ օրենքներից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ իրավական ակտերից.~~

~~**ՀՈԴՎԱԾ 2.**Օրենքի~~ 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «բաժանմունքի պետերը,» բառերը, իսկ «և քննիչները» բառերից հետո լրացնել «ինչպես նաև սույն օրենքով սահմանված հիմքերով քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող ծառայողները:» բառերը:

ՀՈԴՎԱԾ ~~3~~2. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներն են՝ կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունները, կենտրոնական մարմնի վարչությունները և կենտրոնական մարմնի բաժինները: Զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներն են՝ զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունները, կայազորային քննչական բաժինները: Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներն են՝ Երևան քաղաքի քննչական վարչության բաժինները և վարչական շրջանների քննչական բաժինները: Մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումներն են՝ մարզային քննչական վարչության տարածքային բաժինները:Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների ենթաստորաբաժանումներն են՝ գլխավոր վարչությունների վարչությունները:».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության և զինվորական քննչական գլխավոր վարչության պետերն ի պաշտոնե քննչական կոմիտեի նախագահի տեղակալներն են:»:

ՀՈԴՎԱԾ 43. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հաստատումէ քննչական կոմիտեի և քննչական կոմիտեի դեպարտամենտի կանոնադրությունները.».

2. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) ~~իր իրավասության սահմաններում~~ խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում քննչական կոմիտեի ծառայողներին, պարգևատրում է քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց.».

ՀՈԴՎԱԾ 54. Օրենքի 13-րդ հոդվածում՝

3)1-ին մասի 2-րդ կետում «ներքին իրավական ակտեր» բառերը փոխարինել «ներքին և անհատական իրավական ակտեր (որոշումներ, հրամաններ, հանձնարարականներ)» բառերով:

4) լրացնել 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:»:

ՀՈԴՎԱԾ 65.Օրենքի 15-րդ հոդվածում՝

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.Կարգապահական հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի կազմում ընդգրկված կոմիտեի նախագահի տեղակալը:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մաս.

«4.1.Կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանում է կարգապահական հանձնաժողովը՝ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:»:

ՀՈԴՎԱԾ 76. Օրենքի 16-րդ հոդվածում՝

5) 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետ (բացառությամբ՝ սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետում նշված պաշտոնները), հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ:»

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.Քննչական կոմիտեում ծառայության գլխավոր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

3) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետ, Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ, մարզային քննչական վարչության պետ.

4) 2-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ),

զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի պետ, մարզային քննչական վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ, մարզային քննչական վարչության քննչական բաժնի պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:».

7) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.Քննչական կոմիտեում ծառայության առաջատար պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ,Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ.

2) 2-րդ ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության բաժնի պետի տեղակալ.

3) 3-րդ ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, մարզային քննչական վարչության ավագ քննիչ:».

8) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.Քննչական կոմիտեում ծառայության կրտսեր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, մարզային քննչական վարչության քննիչ.

2) 2-րդ ենթախումբ՝ մարզային քննչական վարչության քննչական բաժնի ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ մարզային քննչական վարչության քննչական բաժնի քննիչ:»:

ՀՈԴՎԱԾ ~~8~~7. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում՝

3) «Հայաստանի Հանրապետությունում բակալավրի, » բառերը փոխարինել «բակալավրի» բառով:

4) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ.

«4) ընդգրկվել է քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում:»:

ՀՈԴՎԱԾ ~~9~~8. Օրենքի 18-րդ հոդվածում՝

3) 9-րդ մասի երկրորդ նախադասության «Որակավորման քննություն չհանձնած» բառերը փոխարինել «Ուսումնառությունը չանցած» բառերով.

4) 10-րդ մասի «ուսումնառության դասընթացներից և որակավորման քննություն հանձնելուց» բառերը փոխարինել «ուսումնառությունից» բառով:

5) 10-րդ մասի 1-ին կետում «պաշտոնում» բառից առաջ լրացնել «հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի» բառերը:

ՀՈԴՎԱԾ ~~10~~9. Օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «(բաժանմունքների)» բառը.

ՀՈԴՎԱԾ 1~~1~~0. Օրենքի 22-րդ հոդվածում՝

4) Վերնագրում «ծառայողի լիազորությունների դադարումը» բառերը փոխարինել «ծառայողին պաշտոնից ազատելը» բառերով:

5) 1-ին մասի «ծառայողի լիազորությունները դադարում են՝» բառերը փոխարինել «ծառայողը պաշտոնից ազատվում է՝» բառերով:

6) 2-րդ մասի «ծառայողի լիազորությունները դադարեցվում են՝» բառերը փոխարինել «ծառայողին պաշտոնից ազատելը՝» բառերով:

7) 2-րդ մասի 1-ին կետում «լիազորությունների դադարեցման ձևով» բառերը փոխարինել «պաշտոնից ազատում» բառերով.

ՀՈԴՎԱԾ 1~~2~~1. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 22.1 հոդվածով.

«Հոդված 22.1. Քննչական կոմիտեի ծառայողների կադրերի ռեզերվը

1.Քննչական կոմիտեի ծառայողները գրանցվում են կադրերի ռեզերվում հաստիքների կրճատման, քննչական կոմիտեի մարմնի կամ ստորաբաժանումների լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե քննչական կոմիտեի ծառայողին հավասարազոր պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի բարձր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց:

2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնները քննչական կոմիտեի ծառայողին առաջարկվում են ըստ հերթականության:

3.Քննչական կոմիտեի ծառայողների՝ կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը 6 ամիս է, բայց ոչ ավելի քան սույն օրենքով սահմանված քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալը, իսկ ծառայության ժամկետը սույն օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու դեպքում՝ մինչև երկարաձգված ժամկետի լրանալը:

4.Եթե քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող անձն իր դիմումի համաձայն հանվում է ռեզերվից, ապա վերջինիս ստաժը հաշվարկվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակաշրջանին համապատասխան:

5. Քննչական կոմիտեի ծառայողներին կադրերի ռեզերվում գտնվելու առաջին 2 ամիսների համար վճարվում է նրանց զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Քննչական կոմիտեի ծառայողի՝ իր դիմումի հիման վրա 2 ամիսից շուտ կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վճարումն իրականացվում է կադրերի ռեզերվում գտնվելու փաստացի ժամանակաշրջանին համապատասխան:

6.Սույն օրենքի հիման վրա քննչական կոմիտեի ծառայողներին կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատում է քննչական կոմիտեի նախագահը:»:

ՀՈԴՎԱԾ1~~2~~3. Օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի «լիազորությունները դադարելու (դադարեցվելու) » բառերը փոխարինել «պաշտոնից ազատում» բառերով:

ՀՈԴՎԱԾ 1~~3~~4. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 24. Քննչական կոմիտեի ծառայողների պաշտոններին համապատասխանող կոչումները

1. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-լեյտենանտի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության գեներալ-մայորի կոչումը:

2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-մայորի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության գնդապետի կոչումը:

3.Բարձրագույն պաշտոնի երրորդ ենթախմբի և գլխավոր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գնդապետի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության փոխգնդապետի կոչումը:

4.Գլխավոր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության փոխգնդապետի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության մայորի կոչումը:

5.Առաջատար պաշտոնի առաջին և երկրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության մայորի կոչումն է:

6.Առաջատար պաշտոնի երրորդ ենթախմբի և կրտսեր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության կապիտանի կոչումն է:

7.Կրտսեր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության ավագ լեյտենանտի կոչումն է:

8.Այլ մարմիններում հանրային ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող անձանց քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելիս նրանց զինվորական կամ հատուկ կոչումը (դասային աստիճանը, որակավորման դասը) համապատասխանեցվում է քննչական կոմիտեի ծառայողի կոչմանը:

9.Զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈԴՎԱԾ 14~~5~~.Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«7) քննչական կոմիտեի նախագահի կողմից սահմանված կարգով իրականացնել հերթապահություն:»:

ՀՈԴՎԱԾ 15~~6~~.Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 28.1 հոդվածով.

«Հոդված 28.1. Քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրումը

1.Քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձինք կարող են պարգևատրվել քննչական կոմիտեի նախագահի կողմից՝ շնորհակալագրով, հուշանվերով, դրամական պարգևատրմամբ:

2. Քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:»:

ՀՈԴՎԱԾ 16~~7~~.Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «լիազորությունների դադարեցում» բառերը փոխարինել « պաշտոնից ազատում» բառերով:

ՀՈԴՎԱԾ 17~~8~~.Օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասում «լիազորությունների դադարեցման» բառերը փոխարինել «պաշտոնից ազատելու» բառերով:

ՀՈԴՎԱԾ 18~~9~~. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «լիազորությունների դադարեցման» բառերը փոխարինել «պաշտոնից ազատելու» բառերով:

ՀՈԴՎԱԾ ~~20~~19.Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.
«4) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է հաստիքները կրճատվելիս քննչական կոմիտեի ծառայողի դիմումի հիման վրա.»:

ՀՈԴՎԱԾ 20~~1~~. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 36.1 հոդվածով.

«Հոդված 36.1. Քննչական կոմիտեի ծառայողի մասնակցությունը կրթական ծրագրերին

1.Պարտադիր վերապատրաստման ծրագրերին մասնակցելուց բացի, քննչական կոմիտեի ծառայողը համապատասխան թույլտվության առկայության դեպքում կարող է~~ն իրավունք ունի~~ մասնակցել~~ու~~ այլ կրթական վերապատրաստման ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների: Աշխատանքային ժամերին այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ մինչև երկու օր տևողությամբ բացակայելու թույլտվությունը տալիս է քննչական կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալը: Դրանից ավելի ժամկետով թույլտվություն տալիս է քննչական կոմիտեի նախագահը:

2.Կրթական ծրագրերին քննչական կոմիտեի ծառայողի մասնակցության կապակցությամբ քննչական կոմիտեի ծառայողի բացակայությունը համարվում է հարգելի՝ այդ ընթացքում նրա հիմնական և լրացուցիչ աշխատավարձը պահպանվում է:»:

ՀՈԴՎԱԾ 2~~2~~1.Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում՝ «այլ վայր» բառից հետո լրացնել «ծառայության նշանակմամբ կամ» բառերը:

ՀՈԴՎԱԾ 2~~2~~3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 1-ին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» (Կ-060-07.07.2017,14.11.2017-ՊԻՄԻ-011/1) օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» (Կ-060[1]-07.07.2017-ՊԻՄԻ-011/1) ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» (Կ-060[2]-07.07.2017,14.11.2017-ՊԻՄԻ-011/1) ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին և «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» (Կ-060[3]-07.07.2017-ՊԻՄԻ-011/1) ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	**2**	**3**	**4**	**5**
1.	Պատգամավոր Հրայր Թովմասյան	«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	Առաջարկվում է հանել Նախագծի 1-ին հոդվածը:	Ընդունվել է: Այս դրույթը հանվել է:	Ընդունվել է
2.	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Նախագծի 3-րդ հոդված, 1-ին մաս	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «կենտրոնական մարմնի վարչությունները և» բառերից հետո լրացնել «կենտրոնական մարմնի» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է՝ «2.Քննչական կոմիտեի կենտրոնական	Ընդունվել է

				մարմնի ստորաբաժանումներն են՝ կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունները, կենտրոնական մարմնի վարչությունները և կենտրոնական մարմնի բաժինները: Զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներն են՝ զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունները, կայազորային քննչական բաժինները: Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներն են՝ Երևան քաղաքի քննչական վարչության բաժինները և վարչական շրջանների քննչական բաժինները: Մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումներն են՝ մարզային	

				քննչական վարչության տարածքային բաժինները: Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների ենթաստորաբաժանումներն են՝ գլխավոր վարչությունների վարչությունները:»:	
3.	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Նախագծի 4-րդ հոդված, 2-րդ մաս	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում հանել «իր իրավասության սահմաններում» բառերը:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է՝ «6) խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում քննչական կոմիտեի ծառայողներին, պարգևատրում է քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց.»:	Ընդունվել է
4.	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Նախագծի 21-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 21-րդ հոդվածում «իրավունք ունի մասնակցելու» բառերը փոխարինել «համապատասխան թույլտվության առկայության դեպքում կարող է	Ընդունվել է: Նախագծի 21-րդ հոդվածը խմբագրվել է՝	Ընդունվել է

			մասնակցել» բառերով:	«Հոդված 36.1. Քննչական կոմիտեի ծառայողի մասնակցությունը կրթական ծրագրերին 1.Պարտադիր վերապատրաստման ծրագրերին մասնակցելուց բացի, քննչական կոմիտեի ծառայողը համապատասխան թույլտվության առկայության դեպքում կարող է մասնակցել այլ կրթական վերապատրաստման ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների: Աշխատանքային ժամերին այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ մինչև երկու օր տևողությամբ բացակայելու թույլտվությունը տալիս է քննչական կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալը: Դրանից	

				ավելի ժամկետով թույլտվություն տալիս է քննչական կոմիտեի նախագահը:»:	
5.	**Հայաստանի Հանրապետության կառավարություն**	Նախագծերի փաթեթ	Առաջարկվում է ՀՀ ԱԺ ներկայացված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» (Կ-182-13.11.2017-ՊԻՄԻ-011/0) և «Արդարադատության ակադեմիայի մասին» (Կ-182[1]-13.11.2017-ՊԻՄԻ-011/0) օրենքների նախագծերի կարգավորումները ներառել քննարկվող փաթեթում:	**Ընդունվել է:** Նախագծերի փաթեթի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծով օրենքի 18-րդ հոդվածի 10-րդմասի 1-ինկետում «պաշտոնում» բառից առաջ լրացվել է «հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի» բառերով և փաթեթում ներառվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:	**Ընդունվել է**
6.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	**«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված**	**Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «նախաքննության մարմինների» բառերը փոխարինել «քննչական մարմինների» բառերով:**	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**